ՍԻՐՎԱՐԴ ԲԵԶԻՐՋՅԱՆ

ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Անցի նույնականացման խնդիրն ամենազգայունն է երկրում, տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական փոփոխությունների նկատմամբ: Անցյալ դարի 80-ականների վերջում 90-ականներին աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները չէին կարող հետք չթողնել մարդկանց հոգեկան վրա, չանդրադառնալ նրանց նույնականացման վրա: Այս ժամանակահատվածում դիտվում է էթնիկ զգացմունքների խիստ աճ, ազգային ինքնագիտակցության բարձրացում, ինչի հետևանքով նաև ազգային նույնականացման ձևավորում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո տեսնում ենք մի շարք ազգային պետությունների ստեղծում, այնպիսին ինչպիսին է Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան, Մոլդովան, Ռուսաստանի Դաշնությունը և այլն: Մյուս կողմից աշխարհը բռնկվում է գլոբալիզացման տենդենցներով թափանցիկանում են սահմանները և որպես առանձին դերակատարներ են հանդես գալիս ոչ թե պետությունները, այլ վերազգային միավորումները:

Այս պայմաններում ամենախոցելի իրավիճակում են հայտնվում այն պետությունները, որոնք երկբևեռ աշխարհի փլուզումից և աշխարհի կարգի փոփոխությունից հետո մնում են անորոշ վիճակում, այսինքն, ունենալով անկախ ազգային պետության բոլոր ատրիբուտները ճանաչված չեն միջազգային հանրության կողմից: Այդպիսին էր նախկին Հարավսլավիայի տարածքում գտնվող Կոսովոն, որի անկախությունը այսօր արդեն ճանաչել է 69 երիր: Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում այդպիսի պետություններ են, Աբխազիան, Հյուսիսային Օսեթիան (այս երկու պետությունների անկախությունը ճանաչված է 4 պետության կողմից), Մերձդնեստրյան Հանրապետությունը և իհարկե, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Մենք փորձել ենք պարզել, ինչպես են անդրադարձել այս փոփոխությունները հայերի վրա: Ինչպես գիտենք, հայերը սփռված են աշխարհով մեկ: Համաձայն 2001 թվի մարդահամարի ՀՀ-ի բնակչությունը կազմում է մոտ 3,2 մլն մարդ, ընդ որում, որից մոտ 98% հայ [6]: Մինչ հայկական էթնիկ սփյուռքը համաձայն տարբեր աղբյուրների կազմում է 8-ից 11.5 մլն [օրինակ 13]: Հայկական բազմամիլիոն սփյուռքի առաջացման հիմքերը գալիս են դեռ միջնադարից, այսինքն, հայկական պետականության անկման ժամանակներից: Հայերի

տեղափոխումներն առավել մեծաքանակ են եղել XIX-րդ դարի վերջերից սկսած մինչև XX -րդ դարի 20-ական թվականները՝ որպես հետևանք Թուրքիայի կողմից կազմակերպված ջարդերի և ցեղասպանության: Երբ միլիոնավոր փրկվածներ ստիպված էին թողնել իրենց հարազատ վայրերը և դառնալ գաղթական: Արտագաղթի մյուս մեծ հոսքը տեղի ունեցավ անցյալ դարի 80-ականներին՝ կապված սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների վատթարացման հետ, որոնք հետևանք էին՝ 1) 1988-ի ուժգին երկրաշարժը: 2) Ղարաբաղյան հակամարտությունը, դրա հետևանքով նաև Ադրբեջանից հազարավոր փախստականների ներգաղթը: 3) ԽՍՀՄ-ի փլուզ ումը, այս բոլորի հետևանքով տնտեսության փլուզում, վերացավ երկաթե վարագույրը: 4) Շրջափակումը:

Այսպիսով, հայ ժողովրդի մեծ մասը բնակվում է ոչ թե իր բնօրրանում (որի մի հատվածում (ՀՀ և ԼՂՀ) վերականգնել է իր պետականությունը) այլ սփռված են է ամբողջ աշխարհով: Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերը հայտնվել են ամենախոցելի իրավիճակում: Նախ, նրանք անմիջական մասնակից են եղել մարտական գործողություններին, դրանք ընթացել են իրենց երկրով մեկ և հիմա էլ բնակվում են մի հանրապետությունում, որը դե-ֆակտո ունի պետականության բոլոր ատրիբուտները, բայց ճանաչված չէ աշխարհում ոչ մի պետության կողմից: Միջազգայնորեն չճանաչվածության գործոնը հոգեբանական ազդեցություն է թողնում, առաջացնելով անորոշություն և անվստահություն մթնոլորտ:

Հայկական հոգեբանության մեջ հետազոտված չէ տարբեր պետություններում ապրող հայերի նույնականացման խնդիրը: Մասնավորապես, հետազոտված չէ այնպիսի ուրույն հանրապետությունում, ինչպիսին է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, ապրող հայերի նույնականացումը:

Տարբեր երկներում բնակվող հայերի նույնականացման ուսումնասիրումն այսօրվա հայկական հոգեբանության արդիական խնդիրներից մեկն է: Այսօր, մեր հանրապետության որդեգրած սկզբունքներից է հայության միավորում: Այս կապակցությամբ ձեռնարկվում են տարբեր միջոցառումներ, օրինակ ամենակարևորներից է Սփյուռքի նախարարության ստեղծումը, կամ օրինակ՝ "Մեկ ազգ, մեկ մշակույթ" փառատոնի անց կացում, համահայկական տարբեր երիտասարդական փառատոնների կազմակերպում և այլն: Տարբեր երկրներում բնակվող հայերի էթնիկ նույնականացման ուսումնասիրությունը թույլ կտա կառուցել "հայի" թե՝ էթնիկ և թե՝ ազգային նույնա կացման կերպարը: Արդիական է ԼՂՀ-ում բնակվող հայերի նույնականացման ուսումնասիրությունը: Լինելով էթնիկ հայերի ամենախոցելի խմբերից և բնակվելով պատերազմը վերսկսելու վտանգի ներքո՝ այստեղ բնակեցված հայերի նույնականացումը

հավանաբար ունի իր առանձնահատկությունները, և դրանց ուսումնասիրությունը թույլ կտա մշակել տարբեր միջոցառումներ՝ուղղված նույնականության ճգնաժամի հաղթահարմանը: Դա կարող են լինել երիտասարդական որոշակի միջոցառումներ, համայնքային և տարածաշրջանային մակարդակով կազմակերպված տարբեր կոնֆերանսներ, թրեյնինգներներ, սեմինարներ և այլն:

Որպես հիմնական **վարկած** մենք առաջ ենք քաշում հետևյալ դրույթը՝ նույնականությունը, լինելով անձի հիմնարար առանձնահատկություններից մեկը, սոցիալ-քաղաքական անկայունության և անորոշության պայմաններում միջազգայնորեն չճանաչված պետականության պայմաններում ենթարկվում է փոխակերպումների:

Միջազգային հանրության կողմից չճանաչվածությունը ծնում է վաղվա օրվա անորոշության զգացողությունը, այսինքն՝ սոցիալ-քաղաքական անկայուն վիճակ, պատերազմի վերսկսման մեծագույն վտանգը և հանգեցնում են նույնականության որոշակի առանձնահատկությունների ձևավորմանը:

Հետազոտության **փորձարարական մեթոդիկաներ**՝

1. Նույնականացման բովանդակության բացահայտման համար օգտագործել ենք Մ. Կունի և Տ. Մակպարտլանդի "Ո՞վ եմ ես" մեթոդիկան [10 C. 82-103]:
2. Հանդուրժողականության չափման համար օգտագործել ենք է. Բոգարդուսի սոցիալական հեռավորության սանդղակը [3], [11 C. 216-218], [9 C. 70-73].
3. Գ.Սոլդատովայի և Ս. Ռիժովայի կողմից մշակված մեթոդիկան՝ բացահայտում է էթնիկ ինքնագիտակցությունը և դրա փոխակերպումը [1, էջ 214-215] [9. C 90-95]:
4. Էգո նույնականացման կարգավիճակի բացահայտման համար օգտագործել ենք Ջ Մարսիայի "Անավարտ նախադասությունների" մեթոդիկան [7, C. 115 - 132], [8], [17. P. 551–558]:

Որպես **ընտրանք** հիմնական ընտրանք հանդես են գալիս Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերը և որպես ստուգիչ խմբեր մենք ընտրել ենք ՀՀ-ում, ՌԴ-ում և ԱՄՆ-ում բնակվող հայերի: Ամեն երկրից 40-ական ռեսպոնդենտ: Ընդ որում, 36 և ավելի բարձր տարիքի, որոնք ապրել են նաև խորհրդային ժամանակահատվածում, որպեսզի ուսումնասիրենք նրանց նույնականացման հնարավոր փոխակերպումը, կապված աշխարհաքաղաքական փոփոխություններ հետ: ԱՄՆ-ի և ՌԴ-ի ռեսպոնդենտների ընտրման չափանիշ է եղել նաև այն գործոնը, որ նրանք ապրել են նաև անկախ Հայաստանում, հետո տեղափոխվել են, բնակություն են հաստատել արտերկրում և ոչ պակաս

քան 5 տարի բնակվում են այնտեղ: Արտերկրի մեր ռեսպոնդենտներն եղել են Լոս-Անջելեսի և շրջակա հայաշատ բնակավայրերի (ԱՄՆ) և Մոսկվայի (ՌԴ) բնակիչներ:

Մեր հետազոտության արդյունքում, մեր առաջադրած վարկածը հաստատվեց: Ծճանաչված պետականության պայմաններում տեղի է ունենում նույնականացման փոխակերպում:



Նկար 1. Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերի նույնականացման փոխակերպման վրա ազդող հիմնական գործոնները.

Աղյուսակ 1

	էթնիկ նույնականացում	Ազգային նույնականացում
ՀՀ-ում բնակվող հայեր	14 (35%)	7 (17.5%)
ԼՂՀ-ում բնակվող հայեր	37 (92.5%)	38 (95%)
ՌԴ-ում բնակվող հայեր	23 (57 5%)	17 (42.5%)
ԱՄՆ-ում բնակվող հայեր	37 (92 5%)	8 (20%)

էթնիկ և ազգային նույնականացումներին անդրադարձած տարբեր երկրներում բնակվող հայերի համեմատական տվյալներ (Կունի և Մակպարտլանդի մեթոդիկա)

Այսպիսով, (աղյուսակ 1.) էթնիկ նույնականացումը կարևորվում է ԱՄՆ-ի և ԼՂՀ-ի ընտրանքի մոտ: Ընդ որում, ԼՂՀ-ի ընտրանքի մոտ տեսնում ենք "ղարաբաղցի, արցախցի" բնորոշումը: Մենք կարծում ենք, որ այն բնորոշում է թե՝ ազգային, թե՝ էթնիկ նույնականացման մասին է խոսում: Տվյալ պարագայում մենք տեսնում ենք, և էթնիկ, և ազգային նույնականացումները գտնվում են ակտուալ վիճակում, ինչը բացատրվում է վերը նշված փաստերով: ԱՄՆ-ում բնակվող մեր ընտրանքը կարևորում է իր էթնիկ նույնականացումը: Այս փաստը բացատրվում է նրանով, որ ԱՄՆ-ն լինելով բազմէթնիկ, հայերը անմիջական շփվում են համայնքի ներսում /ի նկատի չունենք գործնական հաղորդակցումը/: ՌԴ-ում համեմատած ԱՄՆ-ի էթնիկ նույնականացումն ավելի ցածր է: Այս

փաստը մենք բացատրում ենք նրանով, որ չնայած ՌԴ-ում հաճախ տիրող ազգայնական տրամադրություններին, նրանք կարող ենք վերագրել այնտեղի հասարակության փոքր մասին: Եվ ՌԴ-ում ապրող հայերի մեծամասնությունն իրենց նույնականացնում է ԽՍՀՄ-ի ժողովուրդների հետ, միասնական պատմական անցյալի հետ: Չէ՞ որ "երկաթե վարագույրի" տարիներին ԽՍՀՄ-ի ժողովուրդների հիմարական հաղորդակցման հնարավորությունը հաղորդակցումն էր միմյանց հետ: Մինչդեռ, ԱՄՆ-ում՝ ամենաբազմէթնիկ պետությունում, բնակվող հայերն ավելի շփվում են է թնիկ համայնքի ներսում: Այսպիսով, Սփյուռքահայերի մոտ էթնիկ և ազգային (մասնավորապես էթնիկ) նույնականացումը ավելի է ընդգծվում: Մենք սա բացատրում ենք բազմէթնիկ միջավայրով: Եվ վերջապես, ԼՂՀ-ի հայերի մոտ էթնիկ և ազգային նույնականացումները վտանգված են (պետք չէ նաև մոռանալ, որ այստեղի ժողովուրդը երկար տարիներ ապրել է Խորհրդային Ադրբեջանի սահմաններում):

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից ՀՀ-ի հայերի մոտ էթնիկ և ազգային նույնականացումները համեմատաբար քիչ են արտահայտված, քանզի նրանք ապրում են իրենց երկրում, որն արդեն 18 տարի ՀՀ-ն անկախ պետություն է՝ իր բոլոր ատրիբուտներով: Ընդ որում, մոնոէթնիկ է, այսինքն այստեղի բնակչության մոտ 98% էթնիկ հայեր են:

Ստացված տվյալները վկայում են այն մասին, որ ԼՂՀ-ում բնակվող հայերի մոտ գերիշխանում է սոցիալական նույնականացումը, այսինքն, այն ավելի է արտահայտված, քան այլ խմբեր մոտ: Այս փաստը մենք բացատրում ենք ինքնակաթեգորացման (self categorization) Թեջֆելի և Թերնների կոգնիտիվ տեսության ներքո [17]: Այսինքն, նրանով, որ սոցիալական նույնականացման ակտուալացումը"արգելակում է" անհատական նույնականացմամբ պայմանավորված վարքը: Ավելի մանրամասնելով, երբ խոցելի է դառնում սոցիալական նույնականացումներից մեկը, տվյալ պարագայում էթնիկ և ազգային նույնականացումները, սոցիալական վերը նշված նույնականացումները ավելի "ուժեղանում են"՝ արգելակելով անհատականները, որոնք ԼՂՀ-ի մեր ռեսպոնդենտների մոտ ավելի թույլ են արտահայտված, քան մյուս ընտրանքի ներկայացուցիչների մոտ (նկար 2): Տեսնում ենք, որ կայացած պետականության պայմաններում, ազգային նույնականացումը կորցնում է իր արդիականությունը: Տվյալ պարագայում էթնիկ և ազգային նույնականացումները փոխկապակցված են: Ընդհանրապես, ինչպես գիտենք ազգային նույնականացումը բխում է էթնիկ նույնականացումից [12, C. 5-6]: Վ. Տատարենկոն իր աշխատությունում նշում է, որ ազգային նույնականացումը բազմամակարդակ գործընթաց է և նրա ձևավորման փուլերն են՝ էթնոտարբերակման փուլը, ավտո և հետերոկարծրատի-

պերի առաջացում և ազգային իդեալի և աշխարհայացքի ձևավորումը [12. C.5-6]: Ըստ Ռ. Էմերսոնի ձևակերպման. "Ազգը միշտ ձգտում է տիրապետել պետությամբ, ինչպես քաղաքական գործիքով, որի միջոցով նա կարող է պաշտպանել և հաստատել ինքն իրեն" [15. P. 96]: Այսինքն, ազգը դա էքսոսն է, որը ձեռք է բերել պետականություն: Ազգն ունի էքսոսից ավելի ուշ ծագում, ազգային նույնականացումն էլ առաջանում էքսիկ նույնականացման հիման վրա:

a

b

Նկար 2. a) Նույնականացման կառուցվածքը ճանաչված պետականության պայմաններում b) Նույնականացման կառուցվածքը չճանաչված պետականության պայմաններում՝դոմինանտում է սոցիալական նույնականացումը:

Ստացված փաստերը համընկնում են նաև Դրոբժինայի ստացված տվյալների հետ [4]: Նա անց է կացրել Կունի և Մակպարտլանդի թեստը և տեսել, որ էքսիկ բախումների պայմաններում սրանում է էքսիկ նույնականացում, իսկ ազգային նույնականացումը գերիշխում էր Յուսիսային Օսեթիայի-Ալանիայի ռեսպոնդենտների մոտ: Ընդ որում, նա նշում է, որ օսեթները և Յուսիսային Օսեթիայում բնակվող ռուսները շատ ավելի են կարևորում իրենց պատկանելությունը Ռուսաստանի Դաշնությանը քան այլ երկրներում բնակվողները [4. C.10-30]:

Աղյուսակ 2

Ընդհանուր հանդուրժողականության համեմատական տվյալներ

ԼՂՀ հայեր	ՀՀ հայեր	ՈՂ հայեր	ԱՄՆ հայեր
0.545	*0.404*	*0.343*	*0.328*

Ընդհանուր հանդուրժողականության/կոմպետենտարության համեմատական տվյալներ

Ինչպես (աղյուսակ 2) երևում է ստացված տվյալներից, ԼՂՀ-ում բնակվող հայերը ունեն կոմպետենտարության ամենացածր ցուցանիշը 0. 545 (0-

0.429 բարձր դրական կոմլեմենտարություն, 0.430-0.714 ցածր կոմլեմենտարություն և 0.715-1 բացասական կոմլեմենտարություն): Ցածր կոմլեմենտարության ցուցանիշը խոսում է ցածր հանդուրժողականության մասին, նրա մասին, որ այս խումբը իրենց այնքան էլ լավ չեն զգում այլ խմբերի հետ սերտ շփումների ժամանակ: Նրանց սոցիալական հեռավորությունը մյուս էթնիկ խմբերից բավականին մեծ է: Այս փաստը կարող է բացատրվել այն պատմական իրողությամբ, որ ԼՂՀ-ն երկար ժամանակ եղել է Ադրբեջանի կազմում, որտեղ ոտնահարվել են հայերի իրավունքները:

Նույնականության և հանդուրժողականության կապի մասին խոսվել է բազմիցս: Ինչքան որ մենք մեզ ավելի ենք նույնականացնում որևէ խմբի հետ, այնքան ավելի է աճում անհանդուրժողականությունը այլ խմբի նկատմամբ: Ինչպես տեսանք նախորդ մեթոդիկայի տվյալներից ԼՂՀ-ի հայերի մոտ դոմինանտում է էթնիկ և ազգային նույնականացումները, հետևաբար՝ նվազում հանդուրժողականությունը մյուս խմբերի նկատմամբ:

Աղյուսակ 3.

	էթնոնիհիլիզմ	էթնիկ անտարբերություն	Դրական էթնիկ նույն.	էթնոէգոիզմ	էթնոմեկուսացում	էթնիկ ֆանատիզմ
ՀՀ	8	8.5	16.8	4.7	5.9	7.5
ԼՂՀ	5.5	7.4	15.2	8	8.7	11.1
ՌԴ	6	8.7	15.8	6	7.6	9.5
ԱՄՆ	4	7.8	18.4	3.5	4.8	5

Տարբեր երկրներում բնակվող հայերի էթնիկ նույնականացման տեսակը բացահայտող տվյալներ

Գ.Սոլդատովայի և Ս Ռիժովայի էթնիկ նույնականացման դոմինանտող տեսակը բացահայտող մեթոդիկայի միջոցով ստացված տվյալները (աղյուսակ 3) հաստատում են նախորդ մեթոդիկաների միջոցով ստացված տվյալները: Այս մեթոդիկան առաջարկում է 6 էթնիկ նույնականացման տարատեսակներ՝ էթնոնիհիլիզմ, էթնիկ անտարբերություն, նորմա կամ դրական էթնիկ նույնականացում, էթնոէգոիզմ, էթնոմեկուսացում և էթնիկ ֆանատիզմ: Ընդ որում, վերջին երեքը խոսում են ծայրահեղ էթնիկ նույնականացման մասին: Վերջին երեք էթնիկ նույնականացման ամենաբարձր ցուցանիշները: Ինչը նորից խոսում է

սրացված էթնիկ նույնականացման մասին: "էթնոէգոիզմ, էթնոմեկուսացում և էթնիկ ֆանատիզմ խոսում են էթնիկ նույնականացման հիպերբոլիզացիայի մասին, սա խոսում է միջէթնիկ հարաբերությունների խտրականացում դնող ձևերի մասին: Միջէթնիկ հարաբերություններում գերնույնականացումը կարող է արտահայտվել էթնիկ անհանդուրժողականության տարբեր ձևերով՝ այլ խմբերի հետ հաղորդակցումից նյարդայնանալուց, մինչև նրանց իրավունքների սահմանափակման համար քաղաքական պայքար, ագրեսիվ, բռնի քայլեր նրանց հանդեպ, ընդհուպ մինչև ցեղասպանություն" [9, C. 91-92]:

Իհարկե, ԼՂՀ-ի պարագայում անհանդուրժողականությունը չի հասնում ծայրահեղ մակարդակի, քանզի 6 էթնիկ նույնականացման տարատեսակների մեջ դոմինանտում է դրական էթնիկ նույնականացումը, սակայն մյուս 3 խմբերի նկատմամբ բարձր են ծայրահեղ էթնիկ նույնականացումները: Ինչը համընկնում է սոցիալական հեռավորության սանդղակի տվյալների հետ, քանզի ԼՂՀ-ի բնակիչների ընդհանուր հանդուրժողականության ցուցանիշը ցածր կոմֆիմենտարիոնն է, մինչդեռ ծայրահեղ անհանդուրժողականությունն արտահայտվում է բացասական կոմֆիմենտարության ցուցանիշով :

Աղյուսակ 4.

էգո նույնականացում

ՀՀ	ԼՂՀ	ՈՂ	ԱՄՆ
51.5	39	53	54

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 4-ից, հայերը, որոնք բնակվում են ՀՀ-ում, ՈՂ-ում և ԱՄՆ-ում ունեն նույնականացման մոտավորապես նույն կարգավիճակը /կայացած նույնականացման կարգավիճակ/: Մինչդեռ, ԼՂՀ-ում բնակվող հայերի նույնականացումը գտնվում է մորաթորիումի կարգավիճակում:

Այսպիսով, հիմք ընդունելով Ջ. Մարսիայի նույնականացման կարգավիճակների մասին տեսությունը և դրանք չափելու համար օգտագործելով նրա առաջարկած մեթոդիկան (անավարտ նախադասությունների) [17]:, ստացված արդյունքները մենք բացատրում ենք հիմնվելով Հ. Թեջֆելի և Ջ Թերների սոցիալական ինքնակաթեգորացման (self-categorization) տեսության վրա [18]: Միջազգային հանրության կողմից չճանաչված պետականության պայմաններում ապրելով (տվյալ դեպքում ԼՂՀ-ում) այստեղի բնակիչների նույնականացումն ունի ավելի "ցածր" կարգավիճակ: Ինչը երևում է մեր հետազոտության տվյալներից: Համաձայն սոցիալական ինքնակաթեգորացման տեսության նույնականացումը կառուցվում է խմբային համեմատության միջոցով: Տվյալ դեպքում համեմատության չափանիշը պետականության առկայությունն է: Այս դեպքում արտախմբային համեմատության ընթացքում, նրանք ստանում են բաց-

սական արդյունք, քանզի այլ խմբերը գտնվում են ավելի շահեկան իրավիճակում ունենալով ճանաչված պետականություն:

Նման հետազոտություն կատարվել է Արևելյան և Արևմտյան Գերմանիաների վերամիավորումից հետո, նպատակ ունենալով բացահայտելու այստեղի բնակիչների նույնականացման կարգավիճակների տարբերությունը: Քանզի հետազոտության հեղինակները ենթադրում էին, որ Արևելյան Գերմանիայի բնակիչների նույնականացումը էքզիստենցիալ ճգնաժամային իրավիճակում է և ունի շատ ավելի ցածր կարգավիճակ քան Արևմտյան Գերմանիայի բնակիչների նույնականացումը: Այսպիսի սոցիալական նույնականացումը ձևավորվում է արտախմբային համեմատության միջոցով (արևմտյան գերմանացիները շատ ավելի շահեկան վիճակում են) և ձևավորվում է բացասական սոցիալական նույնականացումը, որը կարող է հաղթահարվել տարբեր մարտավարությունների միջոցով [5]:

Ստացված տվյալները բացատրելու համար հարկավոր է կատարել մի փոքր պատմական ակնարկ: Չնայած ԼՂՀ-ն բնակեցված էր հայերով (օրինակ 1923-ին մարզի բնակչությունը 94.8% հայեր էին, [2]), այն մտցվեց Ադրբեջանական ԽՍՀՄ-ի կազմի մեջ և ստացավ ինքնավար մարզի կարգավիճակ:

"Վերակառուցման" ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի սուբյեկտների մոտ դիտարկվում է էթնիկ զգացմունքների աճ և ինքնորոշման խնդրի բարձրացում: Այս փաստը բերեց բազմաթիվ էթնիկ կոնֆլիկտների բռնկմանը: Այս կոնֆլիկտներից առաջիններից մեկը Ղարաբաղյան կոնֆլիկտն էր, որը դուրս եկավ իր լատենտ փուլից և անցավ էսկալացիոն փուլ: Իր կուլմինացիան ստանալով 1992-94թ.-ին: Կոնֆլիկտը ուղեկցում էր լայնամասշտաբ ռազմական գործողություններով: 1994թ.-ի մայիսին ԱՊՀ-ի միջպառլամենտական ասամբլեայի միջնորդությամբ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի խորհրդարանների նախագահները ստորագրեցին Բիշկեկյան արձանագրությունը, որը բերեց հրադադարի: Բանակցային գործընթացը հիմնականում իրականանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Այսօր այն գործում է ոչ լրիվ ֆորմատով, միջնորդությամբ են զբաղվում նրա ներկայիս համանախագահները ԱՄՆ-ն, Ֆրանսիան և Ռուսաստանը: Բանակցային գործընթացը շարունակվում է առ այսօր, սակայն առանց մեծ առաջընթացի: Չնայած Բիշկեկյան համաձայնագրի ստորագրումից անցել է ավելի քան 15 տարի և հրադադարը հիմնականում պահպանվում է, կոնֆլիկտը իր վերջնական լուծումը չի ստացել և կան բազմաթիվ տարաձայնություններ, որոնք ծնում են անորոշություն: ԼՂՀ-ի համար մեծագույն անորոշությունը նրա կարգավիճակն է, որից, ըստ այնտեղ բնակվող հայերի, կախված է նրանց անվտանգությունը և նրանց էթնիկ ու

ազգային նույնականացման պահպանումը: Հարկ է նշել, որ չնայած ԼՂՀ-ի կարգավիճակը de jure որոշված չէ, սակայն փաստացի այն ունի անկախ պետության բոլոր ատրիբուտները որոշակի տարածք, բնակչություն, իշխանություն և այլն: Այստեղ մարդկանց մոտ դեռ վառ են հիշողությունները պատերազմի մասին, որը կարող է վերսկսվել ամեն պահի: Չնայած նրանք վստահ են իրենց բանակի հզորությանը, սակայն պատերազմի հետևանքները միշտ կորուստներն ու ավերվածություններն են:

Փաստորեն ստացված արդյունքներից հասկանալի է դառնում, որ միջազգայնորեն չճանաչված լինելը հանդիսանում է որպես սթրեսոգեն գործոն, որը առաջացնում է տագնապայնության բարձր աստիճան: Վտանգվում է նույնականացման "անընդհատությունը", քանզի ապագան անորոշ է [16]: Տագնապայնության աստիճանի նվազման նպատակով առաջ է գալիս այնպիսի պաշտպանական մեխանիզմ, ինչպիսին է ազգային և էթնիկ նույնականացումների սրացումը:

Նկար 3 Չճանաչված պետականության պայմաններում ազգային նույնականացման փոխակերպման դինամիկան

Ամբողջացնելով ասվածը, կարող ենք եզրակացնել, որ հայերը, որոնք բնակվում են ՀՀ-ում, ԱՄՆ-ում և ՌԴ-ում ունեն կայացած նույնականացում: Մինչդեռ, ԼՂՀ-ում բնակվող հայերի նույնականացումը գտնվում է մորաթորիումի կարգավիճակում, քանզի հայերի այս խումբը ապրում է մի պետությունում, որն ընդունված չէ միջազգային հանրության կողմից: Նրանք մեծ անորոշության պայմաններում, որը ծնում է անորոշություն ապագայի մեջ, իսկ ինչպես գիտենք, նույնականացման կարևորագույն առանձնահատկություններից է նրա

նույնությունը և ժամանակի մեջ երկարածգվածությունը: Տվյալ իրավիճակում վաղվա օրը թվում է անորոշ ու մշուշոտ:

Այսպիսով, այսպիսի յուրօրինակ պետականության պայմաններում, նույնականացումը փոխակերպվելով, բերում է հետևյալ հետևանքների



Նկար 4 Չճանաչված պետականության պայմաններում նույնականացման փոխակերպման անիվը

Բացատրելու համար նույնականացման փոխակերպումը, մենք անդրադառնում ենք սիմվոլիկ ինտերակցիոնիզմի Պ. Բուրկեի Նույնականացման վերահսկման տեսությանը [14]: Նա ենթադրում է, որ եթե ուրիշների հետ շփման ընթացքում անձի պատկերացումները իր մասին չեն ամրապնդվում ուրիշների կողմից, նա, ունենալով բացասական հույզեր, փոփոխում է իր պատկերացումները կամ ուրիշներին ստիպում փոխել իրենց ընկալումը: Տվյալ դեպքում, չճանաչված պետականության պայմաններում բնակվող մարդիկ, շփվելով միմյանց հետ հաստատում են իրենց "դարաբաղցի", "ԼՂՀ քաղաքացի" կարգավիճակը, սակայն շփվելով տարածաշրջանի և/կամ այլ երկրների քաղաքացիների հետ չեն հաստատում այս կարգավիճակը, որը և առաջացնում է բացասական հույզեր, բարձր տագնապայնություն և ազգային նույնականացման փոխակերպում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խնդրի տեսական վերլուծության և փորձարարական հետազոտության միջոցով մենք եկել ենք հետևյալ եզրակացություններին՝

- Տարբեր սոցիալ-քաղաքական պայմաններում ապրող հայերի նույնականացումն ունի որոշակի տարբերություններ:
- ԼՂՀ-ում ապրող հայերի նույնականացումն ունի ուրույն կառուցվածք:
- Միջազգային հանրության կողմից չճանաչվածությունը հանդիսանում է անորոշության զգացողություն առաջացնող գործոն, որը ազդեցություն է գործում ԼՂՀ-ում բնակվող հայերի նույնականացման վրա:
- Այսպիսի անկայուն պայմաններում ապրող հայերի նույնականացումն ունի ավելի ցածր կարգավիճակ /կայացած, մորաթորիում, վաղաժամ և դիֆուզ/: Այսինքն, ավելի հավանական է, որ նույնականացումը կգտնվի մորարաթորիումի կամ դիֆուզ նույնականացման կարգավիճակում:
- Ավելի "ցածր" կարգավիճակով նույնականացման դեպքում առկա է ավելի "ցածր" հանդուրժողականություն:
- Որևէ խմբի հետ նույնականացման սրացումը բերում է այլ խմբերի նկատմամբ հանդուրժողականության նվազմանը:
- Միջազգային հանրության կողմից չճանաչվածությունը բերում է էթնիկ զգացմունքների սրմանը, ավելի ծայրահեղ, հիպերբոլացված էթնիկ նույնականացման արտահայտմանը:
- Ազգային նույնականացումը, ի սկզբանե ձևավորվելով էթնիկ նույնականացման հիման վրա, չճանաչված պետականության պայմաններում սրանում է և բերում նույնականացման բովանդակության կառուցվածքում առաջնային դիրքերի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կիրառական հոգեբանության պրակտիկում /Ս.Ջ. Արզումանյան, Ս.Շ. Մկրտչյան, Վ.Ժ. Սարգսյան: Երևան : Զանգակ-97, 2002. 391 էջ
2. Динамика численности населения ХОЙКИКАО в 1923-89 гг. [Электронный ресурс]: http://sumgait.info/caucasus-conflicts/historical-falsifications/historical-falsifications-2.htm (19.08.2009)
3. Донцова М.В. Этнические стереотипы и проблема толерантности в ситуации межэтнического взаимодействия (на примере русских и армян в Краснодарском крае). (Ставрополь.) [Электронный ресурс]: http://lib.socio.msu.ru/l/library?e=d-000-00--0kongress--00-0-0-0prompt-10--4----0-1l--1-ru-50---20-help---00031-001-1-0windowsZz-1251-10&cl=CL1&d=HASH01a62957d015a73e75a9b547.2.1&x=1 (29.01.2009)
4. Дробижева Л.М. Государственная и этническая идентичность: выбор и подвижность. Теоретические проблемы. М., 2006 – 10-30 С.

5. Мухаметшин А. Как преодолеть негативную идентификацию // Иностранная психология. Пер. А. А. Пасковой. 1993. – Т. 1. - №1. – С. 72-73.
6. Национальная статистическая служба РА. Перепись 2001. [Электронный ресурс] - http://www.armstat.am/census/pdfs/51.pdf. (19.02.2010).
7. Орестова В. Р., Мохов В. А. Психологическая диагностика // Методика определения статусов психологической интимности / 2005. - № 4. С. 115 - 132.
8. Попова М. В. Становление персональной идентичности в юношеском возрасте: Дис. ... канд. психол. наук. Новгород, 2005.
9. Практикум по психодиагностике и исследованию толерантности личности. Под ред. Солдатовой Г. У., Шайгеровой Л. А. – М.: МГУ им. Ломоносова, 2003. с.-112 с.
10. Румянцева Т. В. Психологическое конструирование: диагностика отношений в паре. Тест Кина. Тест Кто Я?Ъ (М.Кун). – Макиарт: ист. мификации Т. В. Румянцевой) - СПб., 2006. С. 82-103(117 С.
11. Сонин В. А. Шкала *социальной дистанции рикала Богардуса, вариант Э. Г. Почебут)* Психодиагностическое пособие профессиональной толерантности. – СПб., 2004. С. 216-218 Татаренко Н. В. Национальная идентификация в переходных обществах. Автореф. дисс. ... канд. М., 2003 С. 5-6.
12. Татаренко Н. В. Национальная идентификация в переходных обществах. Автореф. дис. ... канд. психол. наук. М., 2003. С. 5-6.
13. Armenian Diaspora. [Electronic Source] Wikipedia, the free encyclopedia. http://en.wikipedia.org/wiki/Armenian_diaspora. (19.02.2010).
14. Burke, Peter J. Identity Control Theory. [Electronic Source] http://wat21.16.net.edu/Papers/05d.pdf >(05.02.2009).
15. Emerson R. From Empire to Nation. The Rise of Self-Assertion of Asian and African Peoples. Cambridge, 1960. P. 96.
16. Erikson E. H. Identity: youth and crisis. – L.: Faber and Faber, 1968. 336 p.
17. Marcia J. E. Development and validation of ego-identity status // J. of Personality and Social Psychology. 1966. Vol. 3. P. 551-558.
18. Tajfel H., Turner J. C. The social identity theory of intergroup behavior // Psychology of intergroup relations. Ed. by S. Worchel, W. G. Austin. Chicago: Nelson-Hall, 1986. P. 7-24.